

ՍՊԱՆԻՈՑ

Աշխարհագրական, քաղաքական և պատմական հին և նոր վիճակը:

Սպանիա՝ զոր նախնիք իբերիա, Եսպերիա կ'անուանէին, Եւրոպայի հարաւային տէրութիւններէն մէկը, իբերական կամ սպանիական ցամաքական մեծ մասը բռնած է, ընդ մէջ $36^{\circ} 0' 30'' - 43^{\circ} 46'$ հիւսիսային լայնութեան աստիճաններուն, ընդ մէջ 1° արևելեան աստիճանին և 'ի միջոց արևմտեան $11^{\circ} 36'$ արևմտեան աստի-

ճաններուն : Հիւսիսային կողմանէ պատած են Պիւրեննեանք, Պիտասսուա և Պիսգայայ կամ կասգոնիոյ ծոցը. արևմտեան կողմանէ Ատլանտեան ովկիանոսը և Բորդուկալ. 'ի հարաւայի Ատլանտեան ովկիանոսը, Ճիպիլդէր. րայի նեղուցն ու Միջերկրականը, ու յարեւելից՝ Միջերկրականը: Մայրաքաղաքն է Մատրիտ :




Մատրիտ.

Բովանդակ Սպանիոյ երկրին մակերևոյթն է՝ մէկտեղ առնելով նաև Պալէարեան և Գանարեան կղզիները $507,036$ քառակուսի հազարամեդր : Բնակիչն էր 1723 ին $7,625,000$. — 1768 ին $9,307,803$ - 1787 ին $10,409,879$ — 1826 ին $14,154,341$. — 1842 ին $12,054,008$ և 1860 ին $15,673,536$: Զարմանալի է բնակչաց բաժանմունքը Սպանիոյ երկիրներուն մէջ. կան գաւառներ որոնք Ռուսաստանի մէջ եղածներուն նման գրեթէ բոլորովին ամայի են. ինչպէս է օրինակի համար խաղէմատուրա գաւառը. կան ուրիշներ ալ որոնք սաստիկ բազմամարդ են իրեն դրացի տէրութեանց նման : Հոռվամայեցւոց իշխանութեան ներքեւ եղած ժամանակ Սպանիոյ բնակչաց թիւը 40 միլիոն կը համարուի . իսկ Վիսկրոթաց ու Մաւրիտանացւոց ժամանակ 30 միլիոն : Վերջին դարերուս զարհուրելի կերպով նուազեցաւ ժողովուրդը. 1778 ի պաշտօնական հրովարտակաց

համեմատ նոյն ատեն Սպանիոյ մէջ երեսէ ձգուած $1,511$ փոքրիկ քաղաքք և աւանք կը համրուէին: Բատ ներկայ վիճակագրութեան կը գիտցուի որ 148 գլխաւոր քաղաքք կամ ոստանք կան, $4,716$ փոքրիկ քաղաքք, $6,627$ մեծ աւանք, $14,375$ գիւղք կամ աւանք, $2,254$ հանգրուանք կամ ագարակք (fermes ou métairies), 837 ախոռք կամ փակարանք կենդանեաց (enclos) $1,930,824$ տունք :

Սպանիա բարձր ու ընդարձակ սարահարթ մըն է, ու շատ մը մերկ ու անմայրի լերանց պարեր ունի . այս պարերն են . Ա. Պիւրեննեանք՝ որ հիւսիսարեւելեան կողմանէ վինքը Գաղղիայէն կը բաժնեն և կ'երկըննան դէպ 'ի արևմուտք Պիսգայայ ծոցին երկայնութեամբ, ընդ մէջ կալիցիոյ և Աստուրիոյ, և կը կոչուին կանդարեան լերինք: Բ. Իբերեան լերինք՝ որոնք 'ի հիւսիսոյ դէպ 'ի հարաւ կ'երկըննան, և երկիրը երկու զառ 'ի թափ կը բաժ.



Բիքատոր .

նեն , մէկը արևելեան կամ Միջերկրական ծովուն կողմը , միւսը արևմտեան կամ Ատլանտեան ովկիանոսին կողմը : Իրերեան լեռները արևմտեան կողմանէ շատ մը պղտիկ գօտիներու կը բաժնուին . այսպէս է Քարբեդեան-Վեդոնեան գօտին՝ ընդ մէջ Տուրոյի և Դակոյի , մէջերնին բովանդակելով Էյլոնի (Ayllon) , կուատարրամայի , Աւիլայի ,

Կրրտոսի , Ֆրանցհիայի և կաթայի պարերը : Լուսիտանեան կամ Օրէդոյ-Հէրմինեան գօտին , ընդ մէջ Դակոյի և կուատիանայի , ձևացեալ 'ի լերանց Դուխտոյի և կուատալուբայի ու Խսդրամատուրայի պարերէն . Մորենայ պարը՝ ընդ մէջ կուատիանայի և կուատակիվիրի՝ որոնք Ատլանտեան ովկիանոսը կը թափին . Պեղիկեան կամ Նեվա-

տեան պարն՝ ընդ մէջ կուատաքիվիրի և Միջերկրեան ծովուն եղերաց։ Հըրուանդաններու մէջ նշանաւորներն են Ատլանտեան ովկիանոսին վրայ Օրդեկալ, Ֆինխողէր, Դրաֆալկար և Դարիֆա սարերը. Միջերկրական ծովուն վըրայ Եւրոպայի սրածայրը՝ Կադա, Բալոս, Ս. Մարտինոս, Ս. Սեբաստիանոս և Քրէող սարերը։

Սպանիան առողանող գետերն են Պիտասառա, Նալոն, Միննոյ, Տուրոյ, Դակոյ, կուատիանա և կուատաքիվիր, որոնք Ատլանտեան ովկիանոսը կը վազեն. Սեկուրա, Եուգար, կուատալավիար, Էպրոյ, Լոպրէկադ, Դերա, որոնք Միջերկրական ծովը կը թափին։ Այս ջրոց ընթացքն ընդհանրապէս քիչ տեղ նաւարկելիք են, շատ խոր չըլլալնուն և սաստիկ յորդութիւն ունենալնուն պատճառաւ, և հազորդակցութեան քիչ օգուտ կ'ընեն։ Սպանիոյ մէջ մէկ մեծ ձկնաւէտ լճէ մը որ Ալպուժերա կը կոչուի՝ և մէկ մ"ալ ջրի մածուածէ մը՝ 'ի հիւս-արեելից կարթագինէի, զոր Փոքրիկ ծով կ'անուանէն, ուրիշ նշանաւոր լիճ չկայ։ Գլխաւոր ջրանցքն են Արագոնի կամ կայսերականը, Գաստիլիայինը, Մանզանարէսինը. Մատրիտէն մինչև Եարամա. Մուրցհիոյ ջրանցքը՝ կուարտալէն ինչուան կարթագինէ. Ալպացհէդէինը՝ Ալպացհէդէին ինչուան Եուգար։

Բնութիւնը կարծես թէ ամենայն ինչ ըրած է Սպանիոյ համար։ Եթէ կլիմայն սաստիկ տաք է 'ի հարաւոյ, ուրիշ ամեն տեղ բարեխառն է. օգը ամենալաւ և երկինքը գերազանց գեղեցկութիւն ունի. միայն երկու քամի ունի որոնք հիւանդութիւններ կը պատճառեն. կայլէկոյ ցուրտ և խայթող հովը որ հիւսիսէն կը փչէ, և սոլանոյ հարաւային քամին։ Երկիրը որ ընդհանրապէս արդասաբեր է, արուեստական ոռողութեան զանցառութեամբ անմշակ մասեր ունի։ Բերքն է ցորեն, բրինձ, ձիթապտուղ, թուզ, նուռ, կիարոն, նարինջ, խաղող, զափինի, թութ. մշակելի են նաև արմաւենի,

պանան, շաքարի եղէդ, բամբակ, կանեփ, կտաւ և գումաւորիչ տունկեր։ Լերանց մէջ շատ հանքեր ունի. և եթէ ոսկին ու արծաթը առատ էր հին ատեն և հիմա սպառած կ'երևան, սակայն կան երկաթ, անագ, կապար, ծարրաքար, մնդիկ, զառկաքար¹, աղբորակ, պաղեղ, արջասպ, ծծումբ, խրուկ², նաւթ, քարածուխ, ամենազեղեցիկ մարմարիոններ, ալապաստր, կրանիդ, ակունք և այլն։ Ամենայն եւրոպական անասունք կ'ապրին 'ի Սպանիա, և ձիոց, ջորեաց, այծից, և մէրինոս ոչխարներուն ցեղերը շատ անուանի են։ Մեղրուաց և շերամի որդան մշակութիւնն ալ շատ է։

Գալով քաղաքական կառավարութեան, Սպանիա աահմանազրական միապետութիւն է, և ժառանգական՝ թէ արական և թէ իգական գծով։ Կառավարութիւնը յանձնուած է թագաւորի կամ թագուհոյ մը և Գորդէս ժողովոյն։ Թագաւորը անբոնաբարելի է և անպատասխանատու. օրէնք կը հաստատէ, կը հրատարակէ և կատարել կուտայ. պատերազմ և խաղաղութիւնը կը հրատարակէ, քաղաքագիտական վերաբերութեանց տեսչութիւնը կ'ընէ, պաշտօնատէրներ կ'անուանէ, վարձք և պատուանուն կը բաշխէ. կը ժողվէ, կ'ընդհատէ և կը լուծանէ Գորդէս ժողվը, բայց պարտաւորութեամբ իրել ամսուան միջոցի մէջ դարձեալ զիրենք հաւաքելու. արդարութիւնն ալ իր անուամբը կը կատարուի։ Զկրնար առանց Գորդէս ժողովոյն թոյլտուութեան երկրին մէկ մասը թողուլ կամ զրաւի տալ, օտարազգի զօրքերընդունիլ թագաւորութեան մէջ, օտար ազգի մը տուրք տալ, վնասողական պատերազմի համար ուրիշ ազգաց դաշնակից ըլլալ, թագաւորութեանէն հրաժարիլ, և ամուսնանալ. այս վերջին պայմանը անմիջապէս իրեն յաջորդողին վրայ ալ է։ Հիմա թագուհին կ'ըն-

¹ Պ. Cobalt. Տա. Կընէդ Բաւ. +Պատ:

² Պ. Cinabre. Տա. Կիաթքէ:



Բնակիչ Մուրգհիոյ .

դունի 'ի գորդէս ժողովոյն 34,000,000 րէալ, (հազիւ 9 միլիոն ֆր.) փեսան՝ 2,400,000, մայր թագուհին՝ 3,000,000, ինքանդը 550,000, և իբրև ժառանգ՝ 2,450,000։ Գորդէս ժողովը կը կազմուի 'ի ծերակուտէն և Երեսփոխանաց Խորհրդարանէն։ Ծերակուտին թիւը ուղշեալ չէ, զորոնք կ'ընտրէ թագուհին իրկը անգամ երեսփոխան եղածներուն մէջէն, և որոնք 30,000 րէալ եկամուտ

Սպանիացի օրիորդ .

պէտք է որ ունենան, նոյնպէս 8,000 րէալ հարկ վճարող կալուածատեալց մէջէն։ Ելևմոտական, դատաստանական, վարչական և բանակի առաջի կարգի պաշտօնէից մէջէն, և իրենց իշխանութիւնը ձրի ու ցկեանս է։ Թագաւորին որդիքն եռոշեալ ժառանգը ծերակուտի անդամ են ըստ իրաւանց։ Ծերակոյար օրէնսդրական պարտքերէն դուրս՝ կը դատէ սահմանադրութիւնը վճացնել

ուղող ամբաստանեալ պաշտօնեաները, թագաւորին անձին և տէրութեան ա- պահովութեանը դէմ եղած դաւաճա- նութիւնները, և այն առիթներուն մէջ որ իր անդամները տագնապեալ են : Խորհրդարանը 349 երեսփոխաններէ բաղկացեալ է, 35,000 մարդու մէկ անձն առնելով, և ուղղակի կ'անուա- նուին իւրաքանչիւր գաւառաց ընտրող ներէն . իշխանութիւննին ձրի է և 3 տարի կը տեսէ . ելմանական օրինաց վր- րայ կը խորհին : Երեսփոխանք, ինչպէս նաև ծերակուտի անդամք՝ անբունաբա- րելի են : Պաշտօնեալ պատասխանա-

տու գործավարք են ընդ մէջ թագու- հույն և օրէնադրական իշխանութեան . թուով հիմա ինն են, և են ասոնք . Խորհրդոյ նախագահը, պաշտօնեալք արտաքին գործոց (del Estado), ելման- տից, թողութեան և արդարութեան, պատերազմի, ծովային, ներքին գոր- ծոց, կալուածոց, հրամանատարու- թեան, կրթութեան և հասարակաց աշ- խատութեանց (del Fomento) :

Ժեդ գարէն ինչուան 1833 Սպանիա քաղաքագիտական և տեսչութեան աշ- քով նայելով, այս հետագայ բաժան- մոնքս ունեցաւ

Նահանգք

Գլ. տեղիք

Թագ . Արակոնի	{	Գաղալոնիա	.	.	Պարցհելոնա
		Արակոնա	.	.	Սարակոսհա
		Վալենցա	.	.	Վալենցա
Թագ . Նաւարրայի	Բամբլոնա
Թագ . Մուրցհիոյ	Մուրցհիա
Հին Գասդիլիա	{	Պուրկոս	.	.	Պուրկոս
		Սորիա	.	.	Սորիա
		Սեկովիա	.	.	Սեկովիա
		Ա՛ւիլա	.	.	Ա՛ւիլա
		Վիսգայա	.	.	Վիլվայ
Պասդեան նահանգք	{	Կիբուսգոս	.	.	Ս . Սեբաստիանոս
		Ալաւա	.	.	Վիդորիա
		Կուատալախարա	.	.	Կուատալախարա
		Մատրիտ	.	.	Մատրիտ
		Դոլե՛տոյ	.	.	Դոլե՛տոյ
		Գուէնգա	.	.	Գուէնգա
		Մանշ	.	.	Մհիուտատ-Ռէալ
		Խաէն	.	.	Խաէն
Անտալուսիա	{	Գուրտովլա	.	.	Գուրտովլա
		Սեւիլիեա	.	.	Սեւիլիեա
		Կրաննատա	.	.	Կրաննատա
Թագ . Մայորդայ	Բալմա
Թագ . Կալիցհիոյ	Սանդիակոյ
Թագ . Լէոնի	{	Աստուրիա	.	.	Ովիե՛դոյ
		Լէոն	.	.	Լէոն
		Գալենցհիա	.	.	Գալենցհիա
		Գալեատոլիտէ	.	.	Գալեատոլիտէ
		Դորոյ	.	.	Դորոյ
		Մհամորա	.	.	Մհամորա
		Սալամանգա	.	.	Սալամանգա
Թագ . Էստրամատուրայ	Պատախոսհ

Սպանիոյ երկիրը սահմանակից կրղ-
դիներովն հանդերձ 1833ին նոյեմբերի
30ին թագաւորական հրովարտակաւ-
լստ զինուորական տեսութեան 12 գըլ-
խաւոր կուսակալութիւն բաժնուեցաւ
և 5 փոքր վիճակ. հիմակուան ժա-
մանակս է 13 գլխ. կուսակալութիւն
և 3 փոքրիկ վիճակ: իսկ ելեմտա-
կան և մատակարարական տեսութեան
համեմատ 48 նահանգ կամ քաղաքա-
կան ոստիկանութիւն, որոնց վարչու-
թիւնը ներքին պաշտօնէին գործակա-
լաց ձեռքովը կը կատարուի: Ահաւա-
սիկ կուսակալութեանց և ոստիկանու-
թեանց պատկերը լստ 1865 տարւոյն:

Կուսակալութիւնք Ոստիկանութիւնք

Նոր Գասդիլիա	Մատրիտ
	Կուսատալախարա
	Դոլետոյ
	Գուենդա
	Սհիուտատ-Շէալ
	Սեկուլիա
	Պուրկոս

Պուրկոս	Լոկրոնեոյ
	Սանդանտէր
	Սորիա

Հին Գասդիլիա և Լէոն	Ովկնդոյ
	Ա՛շիլա
	Լէոն
	Բալենցիա
	Պալեատոլիտէ
	Սալամանդա
	Սհամորա
	Գորունեա
Կալիցիա	Լուկոյ
	Որենսէ
	Բոնդէվետրա
	Պատախոսէ
	Գասէրէս
	Սեւիլիեա
	Հուելվա
	Գատիսէ
Էնտալուսիա	Գորտովա
	Խաէն
	Կրանատա
	Ալմերիա
	Մալակա
	Վալենցա
	Ալֆանդէս
	Գասդելեոնա-տէ- լա-Բլանա
Վալենցիա	Մուրցիա
	Ալպացհէդէ
	Պարցհելոնա
	Դարրակոնա
	Լէրիտա
	Խերոնա
Գադալոնիա	Վալենցիա
	Ալմագրա
	Պարցհելոնա
	Դարրակոնա
	Լէրիտա
	Խերոնա



Մալակա:

Արագոնա	Սհարակոսէա
	Հուեսպա
	Դերուէլ
	Բամբլոնա
Նաւարրա	Վիդորիա
	Վիլվաոյ
	Ս. Սեբաստիանոս
	Բալիա
Պասգեան նա- հանգք	Վանդա
	Վանդա
	Վանդա
	Վանդա
Պալէարեանք	Վանդա
	Վանդա
	Վանդա
	Վանդա

Փոքրիկ կառավարութիւնքն են Մա- րոն, իվիցհա՝ Պալէարեանց կուսակա- լութեան մէջ. Ճիպրալդար՝ Գատիսէի ոստիկանութեան մէջ. Սէւդա՝ Ափրի- կէի ծովեզերաց վրայ և Գանարեան կղզիները: Սպանիոյ քաղաքական բա- ժանմանցը մէջ կը զանազանուին 1.	
	Փոքրիկ կառավարութիւնքն են Մա-
	րոն, իվիցհա՝ Պալէարեանց կուսակա-
	լութեան մէջ. Ճիպրալդար՝ Գատիսէի
	ոստիկանութեան մէջ. Սէւդա՝ Ափրի-
	կէի ծովեզերաց վրայ և Գանարեան
	կղզիները: Սպանիոյ քաղաքական բա-
	ժանմանցը մէջ կը զանազանուին 1.
	12

Նոյնակերպ Սպանիա (España uniforme), որ է ըսել՝ Սպանիա պարզ սահմանադրական, բովանդակելով իր մէջը Գաստիլիոյ և Լէոնի թագաւորութեանց հին նահանգները, որք յամենայնի մի և նոյն կերպն ունին 'ի մատակարարութեան մասին, 'ի տուրս, 'ի դատաստանական, քաղաքական և զինուորական վարչութիւնս։ 2. Նմանակերպ Սպանիա (España assimilada), որ է ըսել՝ Սպանիա ոչ նոյնակերպ, բովանդակելով յինքեան Արագոնի թագաւորութեան նահանգները, որոնք կը զանազանուին իրարմէ ըստ տրոց և ըստ քանի մը մասնական իրաւանց։ 3. Ֆորեալ Սպանիա (España foreal) որ կը պարունակէ իր մէջը Պասգեան նահանգներն ու Նաւարրայինը, որոնք զինուորական ծառայութենէ և արքունական սակերու իրաւունքէն ազատ են, և իրենց հին նահանգական իրաւունքը պահած են։

Ըստ ծովային տեսութեան Սպանիա Յ բաժնուած է և իւրաքանչիւր մասը ծովակալի մը ձեռքով կը մատակարարուի։ Լէոնի կղզւոյն կամ Գատիսնի մասը կը բովանդակէ յինքեան կրանատայի, Անտալուսիայի, Խադրէմատուրայի, Նոր Գաստիլիոյ թագաւորութիւններն և Գանարեանքը։ Ֆերրոյի մասին մէջ կը բովանդակուին կալիցիա, Հին Գաստիլիա, Նաւարրա և Պասգեան նահանգը։ Իսկ Կարթագինէի մէջ Արագոնա, Գադարնիա, Պալենցիայի թագաւորութիւնը և Պալէարեան կղզիկը։ Խամանատարներն ունին մէջ կամ ծովակալի օգնական։ Խամանատարներ ծովակալ ձեռքին տակ հրամանատարներ ունի որոնք շատ նաւահանգիստներու կը հսկեն, և իւրաքանչիւր նաւահանգստի մէջ ստորին սպայ մը կայ կամ ծովակալի օգնական։

Գատաստանական 12 բարձրագոյն ատեան ունի Սպանիա, և քաղաքներն են Բալմա, Պարցհելոնա, Պուրկոս, Գասէրէս, Ալպացհէզէ, կրանատա, Մատրիտ, Գորտունեա, Բամբլոնա, Ռիվիերայ, Սարակոսա, Սեւիլիեա, Պալենցիա և Պալեատոլիտէ։ և 484 ստորին ատեան։

Սպանիոյ ելեմտական մատակարարութիւնը մեծ խառնակութեան մէջ է և միշտ անստուգութիւն կայ թուոց նկատմամբ։ 1864ին հաշուէտումարը (budget) ելքը 680 միլիոնի կը հանէր, և մուտքը 684 միլիոնի։ Հասարակաց պարտքը 4 միլիար 128 միլիոն կը համարուի, որուն շահը ամենայն ճշդութեամբ կը վճարուի միշտ։

Սպանիոյ բանակը այսպէս կազմուած է. թիկնապահնք թագուհուոյն 283 անձինք. մշտամնայ հետեակազօր՝ պահեստի գունդն ալ մէջը սեպելով 169,972. թնդանօթաձիգք 12,369. ճարտարապետական գունդ 4,016. հեծելազօր 16,824. քաղաքական պահանորդք 10,944. տեղական զինուորք 19,629. համագումար 234,004 անձինք, որոնցմէ 9,203ը սպայք են. և 21,600 երիվարք կամ ջորիք։

Զինուորական նաւատորմիզը՝ որ ֆերդինանտոս իի ատեն գրեթէ բոլորովին ոշնչացաւ, հիմա զգալի ուժ մը ստացաւ, մամնաւորապէս իր շոգեշարժ նաւերուն շատնալովը. 1845ին միայն 680 ձիու ուժ ունէր. այսօրուան օրս 18,000 ձիու ուժ ունի. Նաւատորմիզը կը բաղկանայ 2 առաջին կարգի նաւերէ, 19 ֆրեկադէ, 13 քորվեդէ, 18 թնդանօթաձիգէ, 29 կեօլեդէ, 16 բեռնաբարձէ, 43 ֆրուգէ, և այլն. ընդ ամենը 123 նաւ (26 առագաստաւոր, 97 շոգեշարժ), կրելով 1285 թնդանօթ, 1,124 սպայ, 14,680 նաւաստի, և 7,980 ծովային զինուոր։

Սպանիա որ երբեմն գրեթէ բովանդակ Նոր-Աշխարհին տէրն էր, ներկայապէս ամենազիշ կալուած ունի. Ովկիանիոյ մէջ Փիլիպպեանք, Մարիաննանք և Գարոլինեանք. Ավրիկէի մէջ Սէւդա, Բենոն տէ Վէլէզ, Մելիլեա, Ալուսհեմաս, Անապոն և Գանարեան կղզիները. Ամերիկայի մէջ Գուապա, Բուերդոյ-Ռիգոյ, և Փոքր Անտիլեանց մէջ Աստուածածնայ կղզիները. 1788ին կալուածներէն 140 միլիոն ֆր. վաճառք կ'ընդունէր. 1829ին այս վաճառքերութիւնը 19 միլիոն ֆր. կը հասնէր։



Կին շինական՝ ի շրջակայս Պաղեատոլիտի։

Սպանիոյ կրօնքն ուղղափառութիւն է. ինն արքեպիսկոպոսութիւն կը համընտէր 1865ին բովանդակ Սպանիոյ մէջ կալուածներն ալ մէկտեղ առնելով, (Սանդիակոյ, Պուրկոս, Սարակոսհա, Դարրակոնա, Պալենցհիա, Կրանատա, Սեւիլիա, Պալեատոլիտհ (1857) և Գոլետոյ՝ որ Սպանիոյ նախագահ աթոռն է). 53 եպիսկոպոսութիւն, 65 կաթողիկէք, 100 կանոնիկոսական եկեղեցի, և 20,462 ժողովրդապետու-

թիւնք : Բովանդակ եկեղեցականաց թիւն էր 1830ին 152,305 հոգի . իսկ հիմա գրեթէ 70,000 : Սպանիոյ մէջ 1834ին 1940 վանք կար, որոնց մէջ 30,905 կրօնաւորք և 24,700 միանձնուհիք կային : Կրօնաւորաց վանքերը 1835ին ցրուեցան և հիմա միայն դէպ 'ի Ասիա առաքելութեան տուներ կան 'ի Պալեատոլիտհ, Ռուսա և Մոնղէակուտոյ . բայց հիմա ալ 600 կուսատան կայ 19,000 մայրապետով, և 14,000


կրօնաւորք առանց մենաստանի, որոնք տէրութենէն թոշակ կ'ընդունին իրենց ստացուածքը յափշտակած ըլլալուն համար :

Նախնական կրթութիւնը շատ ետ մնացած է 'ի Սպանիա . 1852ին մանչ տղոց 17,009 դպրոց կար, և 5,021 աղջկանց . 1860ին աշակերտաց թիւն էր 1,100,000, և միայն 3,129,000 անձինք կային կարգալ գիտցող, և հազիւ թէ 1,200,000 հոգի, կարգալ և գրել մէկտեղ գիտցող : Բարձրագոյն կրթութեան աւելի խնամք տարուած է . 774 լատինուսումն դպրոց և 8 թագաւորական մարզատունք կը պատրաստեն ըզպատանիս՝ եթէ ըլլայ կղերանոց (թուով 50) մտնելու համար, և եթէ ըլլայ համալսարաններու մէջ ուսմունքնին լրացնելու համար . 10 համալսարանաց քաղաքներն են Մատրիա, Պարցհելոնա, Կրանատա, Ովիեդոյ, Սալամանկա, Սեւիլյա, Սանդիիակոյ, Վալենցիա, Պալեաստոլիտհ և Սարակոսհա :

Երկրագործութիւնը շատ զարգացած չէ 'ի Սպանիա . աշխատողաց քիչութիւնը, եկեղեցականաց կալուածներուն անժառանգելի ըլլալու իրաւունքը, ազնուականաց անդրանիկի մասին ժառանգութեան իրաւունքը, ամենայն կողմ քալող հօտից արածուելու իրաւունքը, Սպանիացւոց անհոգութիւնը, որոնք Ամերիկայի հանքերովն հարաստանալով՝ սովորեցան դրացի ազգերէն խնդրելու ինչ որ իրենց երկիրը կրնար արդիւնաբերել, և մուրացկանութեան արմատացած ախտը, վերջապէս ամենայն ինչ ձեռնտու եղաւ շատ մը բեղնաւոր երկիրներ՝ ամայի մարգեր և ճշմարիտ անապատներ դարձնելու : Երկիրներուն հազիւ թէ կէսը մշակուած է :

Ճարտարութիւնք և արուեստք ատենօք շատ զարգացած էին : Միջին դարու մէջ արժանապէս մեծ համբաւ ունէին Սեւիլիոյ, կրանատայի և Պաէսհայի բրդեղէն և մետաքսեղէն գործուածները, Մուրցհիոյ ասուիները և Դուղետոյի զէնքերը : Մաւրիտանացւոց և Հրէից արտաքսումը, քաղաքական և

կրօնական հալածանքն, արքունական ձեռագործաց սեպհական մենավաճառութիւնը, առանձինն արուեստից վըրայ եղած ծանրաբեռն իրաւունքը՝ զոր և տէրութեան անյագ գործավարները աւելի ևս կը ծանրացնէին, ըստ ամենայնի ձեռագործաց կյնալուն պատճառ եղան : Սեւիլիոյ մէջ 1519ին 16,000 մետաքսեղինաց արուեստանոցք կային 130,000 գործաւորով . իսկ 1673ին հազիւ թէ 405 մետաքսի գործարանք : Սեւիլիոյ գործարանները՝ ուր 34,000 գործաւորք տարին 25,000 կտոր բան կը շինէին, 1788ին միայն 400 կտորի վերածուեր էր : Մեր օրերուն ճարտարութէք և արուեստք քիչ մը շարժմունք առած են, բայց արտաքին մղմամբ . այսպէս՝ Գաղալոնիոյ մէջ գաղղիացի կամ անդղիացի են գործատանց ամեն գլխաւորքն ու տեսուչք : Եկեղեցականաց հին ստացուածոց շատը արուեստագիտաց ձեռքն անցած են, և վանքերն արուեստանոցք և մանարանք դարձած են : Մետաղագործական արուեստք զարգացած են 'ի կիբուզուա, Պիսգայա, Արագոնա, Գաղալոնիա և կրանատայի նահանգին մէջ : Մետաքսի գործարաններ կան 'ի Պարցհելոնա, Մանրէզա, Դարրակոնա, Դոլետոյ, Սեւիլեա և Պալենցհիա . բրդեղէն դիպակը 'ի Սեւիլիովիա, Արեվալոյ, Քոլմինար, Ալսհուա . կտաւեղէնք՝ 'ի կալիցիա և 'ի Գաղալոնիա . սեկը 'ի Պարցհելոնա, Գորտովիա, Պուրկոս, Դոլետոյ,



Դորտովիա :

կրանատա և Մատրիա . ապակեղէնք 'ի Պարցհելոնա . բիւրեղք՝ 'ի Ս . Իլտեփոնս կղզին . Խեցեղէն անօթք՝ յԱնտուխար . թուղթ՝ 'ի Գաղալոնիա և Պալենցհիայի նահանգին մէջ : Հրացան զինուց ձե-

ուագործներ կան Պատգեան նահանգաց մէջ, 'ի Գաղալոնիա և 'ի Սեկովիա: Կտրող զէնքեր 'ի Դոլետոյ և 'ի Կիբուս գոա. Հրանօթոց ձուլարանք 'ի Սեւիւնա, Լիէրկան, Դրուպիա և Պարցհելոնա, և այլն:

Սպանիոյ վաճառականութիւնը շատ վնասուեցաւ այն խռովութիւններէն որոնք պատճառ եղան Ամերիկայի կալուածները կորսնցնելու: Առևտուրի համար մեծամեծ դժուարութիւններ են գետակաց և ջրանցից քիչ նաւարկելի ըլլալը, աղէկ ճամբաներ չըլլալը, ապահով չըլլալու վախը, ներքին մաքսատունները: Շոգեկառաց ճամբաները նորերայառաջադիմելու և շատոնալու հետ են: 1861 տարւոյն ընդհանուր վաճառականութեթիւը կ'ելլէր 888,325,000 ֆրանք, որոնցմէ 545,000,000ը ներս մտած վաճառուց համար և 342,000,000 դուրս հանուածներուն համար էր: Ներս մտած վաճառքն են ցորեն, բամբակէ, մանած և մետաքսի գործուածներ, ոսկերչական ապրանք, պճինք, պղնձեղէն և երկաթեղէն ապրանք, նորելուկ բաներ, պողլատ, շինութեան փայտ, Գաղղիոյ՝ Անդղիոյ և Գերմանիոյ հոտաւէտ նիւթեր: Իսկ դուրս ելածներն են գինի, չոր պտուղ, բուրդ, մնդիկ, կապար, սունկ, սեկ, օղի, ձէթ, կալաքար, մետաքս և ծխախոտ:

Սպանիոյ զանազան վաճառական նաւահանգիստները գրեթէ 6,000 նաւ կը զինեն, որոնցմէ 1,500ը 'ի Գատիսհ, 1,500 'ի Մալակա, 800 Պալէարեան կղզեաց մէջ, 700 'ի Պարցհելոնա, 600 'ի Կարթագինէ:

Կը շարունակուի:

Պէտք է անպատշաճութեան մը համբերել, երբ կարելի չէ այնմ գարման ընել բայց եթէ մէծագոյն վնասու:

Ո՞վ զքեզ այնպէս յաճախ խաբեր է՝ ինչպէս դու ինքն:

Փախիր 'ի հաճոյից, անոնք քու ետեղ կուդան:

Ս Ա Ր Դ Ք

(Տես Երես 158)

Գ Ի Ր Ք Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ՑԻՇԱՏԱԿԱՑ ԲԱՆՔ

Է

Բայց ամեն զրօսանք իր վերջն ունի. և ստէպ այս վերջը անախորժ կ'ըլլայ: Այսպէս եղաւ մեր ընտանութեան զուարճութիւնն ալ:

Ջմեռն հասաւ իր մառախլապատքօղովը. դառն հովերը սկսան չնչել. աւլեցին տարին որչափ առջևնին գտան միջատային որսական. նուազեցաւ կերակուրը. հետզհետէ պակսեցաւ որսիկը, և հազիւ երբեք փնտուելով կարելի կ'ըլլար ջերմ տեղուանք գտնել. այն ալ վատոյժ, անհամ և կիսամեռ սառոյցքն. զոր հազիւ թէ ակռան դպցընելու արժանի կը սեպէր:

Կը ցաւէի խեղճ էակին վրայ. մանաւանդ քանի որ միտքս կու գար այն զոհը որ ամենօրեայ հրով ինծի համար կը ճենճերէր, սիրտս կը խշչար յիշելով այն տագնապը որուն մէջ կը դրանուէր սարդիս որովայնը: կը մտածէի ճար մ' ընել, ճար չէի գտնար. վասն զի ցուրտը քանի գնաց սաստիացաւ, և անոր բռնութեանը առջին ամենայն ճանճական շունչ անհետացաւ. անանկ որ ամենայն մանրախոյզ ասպատակութիւն՝ արևելք կամ արևմուտք, անօգուտ ելք կ'ունենար:

Լքայ վինտուելէն. ճանճրացայ այլոց որսորդաց յանձնելէն. և այս լքմանս մէջ ամեն օր, ամեն ժամ սարդիս անշրնչանալը տեսնել կը սպասէի: Այդ կորստեան մտածութիւնը ինծի ծանր կ'երենար, յետ այնչափ ատեն սարդը՝ իննամբով պահելէս: